ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ
ЦЕНРАЛЬНЫЙ БАНК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
CENTRAL BANK
OF THE REPUBLIC OF ARMENIA

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

№ 06

ՀՀ կենտրոնական բանկի
խորհրդի անդամ Ն.Երիցյանի
մոտ կայացած խորհրդակցության
18.03.98 թ.

Մասնակցում էին

Ա.Խաչատրյան - ՀՀ ԿԲ դրամավարկային քաղաքականության վարչության պետ

Ա.Մկրտչյան - ՀՀ ԿԲ դրամավարկային քաղաքականության վարչության ֆինանսական ծրագրավորման և դրամավարկային քաղաքականության մշակման բաժնի պետ

Ա.Ստեփանյան - ՀՀ պետբյուջեի հետ փոխհարաբերությունների կարգավորման բաժնի ավագ մասնագետ

Ս.Լալայան - ՀՀ ֆինէկոնոմնախի տնտեսական քաղաքականության մշակման գլխավոր վարչության պետ

Ա.Խուրշուդյան - ՀՀ ֆինէկոնոմնախի ֆինանսական ծրագրավորման և դրամարկղային կատարման վարչության պետ

## ԼՍԵՑԻՆ

1. ՀՀ ԿԲ և ՀՀ ֆինանսների ու էկոնոմիկայի նախարարության փոխհարաբերություններում առկա բացթողումների քննարկում

2. ՀՀ ԿԲ և ՀՀ ֆինանսների ու էկոնոմիկայի նախարարության փոխհարաբերություններում նախկինում եղած ավանդույթների վերականգնման անհրաժեշտության մասին

3.1998թ. երկրորդ եռամսյակի հիմնախնդիրների և ՀՀ դրամավարկային քաղաքականության ծրագրում տեղ գտած խնդիրների ու նրանց նկատմամբ դիրքորոշումների հստակեցման մասին

## ՈՐՈՇԵՑԻՆ

Ն.Երիցյան- Առաջին հարցին, որ ես կուզեի անդրադառնալ, 1997թ. վարկային պայմանագրի հարցն է, որը մեր առաջին արձանագրության մեջ տեղ է գտել և որին անհրաժեշտ է որոշակի լուծում տալ: Այն վարկային գլխավոր պայմանագրի մեջ չմտավ, սակայն այսօր դրա լուծման անհրաժեշտությունը կա: Ուստի երկուստեք պայմանավորվածություն է ձեռք բերվել, որ մինչև օրվա վերջը

պատրաստվի 1997թ. վարկային պայմանագրի տեքստն ու ներկայացվի ՀՀ ԿԲ նախագահի և ՀՀ ֆինանսների ու էկոնոմիկայի նախարարի հաստատմանը:

1. Հանձնարարել ՀՀ ԿԲ դրամավարկային քաղաքականության վարչության (Ա.Խաչատրյան) և ՀՀ ֆինէկոնոմնախի ներկայացուցիչներին

համատեղ աշխատել և մինչև մարտի 18-ի օրվա վերջը ՀՀ ԿԲ նախագահի և ՀՀ ֆինանսների ու էկոնոմիկայի նախարարի հաստատմանը ներկայացնել 1998 թ. վարկային պայմանագիրը:

Ն.Երիցյան- Մյուս հարցը վերաբերում է ՀՀ կենտրոնական բանկի և ՀՀ ֆինէկոնոմնախի փոխհարաբերություններին: Ինչպես գիտեք, կենտրոնական բանկը նամակով դիմել էր ֆինէկոնոմնախին, որտեղ տեղեկացվում էր, որ ՀՀ կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության վարչության պետ Ա.Խաչատրյանը և ֆինանսական գործառնությունների վարչության պետ Ա.Վարդանյանը կենտրոնական բանկի պաշտոնական ներկայացուցիչներն են նախարարության բյուջետային և տնտեսական հարցերի հանձնաժողովի աշխատանքներին մասնակցելու համար: Նույնը մենք ակնկալում ենք նախարարությունից: Երբ վերոհիշյալ հանձնաժողովի աշխատանքները չեն կայանում, մեր կապերը ինքնըստինքյան խզվում են: Մեզ հետաքրքրում է, թե երբ է հանձնաժողովը սկսելու աշխատել, և մենք արդյո՞ք կարող ենք արձանագրել, որ մեր աշխատանքները կառավարության հետ կոորդինացվելու են միայն այս աշխատանքային մարմնի միջոցով: Հանձնաժողովում ընդունված որոշումները անվերապահորեն պետք է կատարվեն, և սպորբերաբար պետք է իրականացվի դրանց վերահսկողությունը, խոկ կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության հանձնաժողովում արված առաջարկությունները հաշվի կառնվեն և կքննարկվեն: Մենք դեռևս հստակ չգիտենք, թե կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության հանձնաժողովի նիստում պաշտոնապես ով է ներկայացնում նախարարությունը: Ուստի առաջարկում ենք նախարարությանը մինչև առաջիկա դրամավարկային քաղաքականության հանձնաժողովի նիստի օրը (ուրբաթ) պաշտոնապես նամակով մեզ տեղեկացնել այդ մասին: Դրանով մեր աշխատանքներն ավելի առարկայական կլինեն: Նախարարության խնդրանքով հստակ նշանակված է նաև ՀՀ ԿԲ դրամավարկային քաղաքականության հանձնաժողովի աշխատանքների սկիզբը ժամը 16.00-ին: Նախարարության ներկայացուցչի բացակայության դեպքում մենք չենք կարողանում որոշումներ կայացնել կամ կայացված որոշումներն ավելի թույլ են լինում, քանի որ շատ դժվար է կողմնորոշվել, թե նախարարությունը ինչ գործողություններ է նախատեսում իրականացնել: Եթե առեղծներ չունեք, այդ դեպքում նույնպես պետք է մասնակցել: Նույնը պարտավորվում ենք նաև մենք, այն է՝ ապահովել մեր մասնակցությունը նախարարության բյուջետային և տնտեսական հարցերի հանձնաժողովի աշխատանքներին, որովհետև մենք կարևորում ենք մեր հարաբերություններն այդ մակարդակով, այսինքն՝ հարաբերությունները պետք է կարգավորվեն ինստիտուցիոնալ մակարդակով և ոչ թե անհատականացված ռեժիմով ինչպիսի պրոբլեմներ էլ որ լինեն: Այս ինստիտուտներից դուրս աշխատանքները արդյունավետ չեն կարող լինել: Սա նաև կապահովի ՀՀ կենտրոնական բանկի և կառավարության միջև փոխհարաբերությունների թափանցիկությունն ու հրապարակայնությունը:

Ս.Լալայան- Ես կարծում եմ, որ մեր փոխհարաբերությունները վերը նշված ինստիտուտների միջոցով կարելի է իրականացնել վերջնական որոշումների կայացման իմաստով և նույնպես կարևորում եմ աշխատանքների նման մակարդակով կազմակերպման անհրաժեշտությունը:

2. Արձանագրել, որ ՀՀ կենտրոնական բանկը և ՀՀ ֆինանսների ու էկոնոմիկայի նախարարությունը համակարծիք են փոխհարաբերությունները ինստիտուցիոնալ մակարդակով կառուցելու հարցում:

3. Ընդունել ի գիտություն ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության ներկայացուցիչների հայտարարությունը՝ առաջիկայում նախարարության բյուջետային և տնտեսական հարցերի հանձնաժողովի աշխատանքների վերսկսման վերաբերյալ:

4. Առաջարկել պ-ք Ս.Լալայանին և Ա.Խուրշուդյանին

ա) մինչև ս.թ. մարտի 20-ը նամակով պաշտոնապես ներկայացնել ՀՀ կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության հանձնաժողովի աշխատանքներին մասնակցող նախարարության պատասխանատու աշխատակիցների ցանկը:

բ) մինչև օրվա վերջը ներկայացնել բացատրագիր կամ ՀՀ կենտրոնական բանկի կողմից ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարար պրն Ա.Դարբինյանին ուղղված նամակի պատասխանը՝ արտահայտելով նախարարության դիրքորոշումը սեփականաշնորհման մասերից բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման հարցի վերաբերյալ ՀՀ կենտրոնական բանկի դիրքորոշման, ինչպես նաև ԱՄՀ-ի հետ կնքված եռամյա համաձայնագրում ամրագրված հիմնական սկզբունքներից և չափանիշներից շեղումների մասին:

գ) առաջիկա բյուջետային և տնտեսական հարցերի հանձնաժողովի քննարկմանը ներկայացնել 7 մլն ԱՄՆ-ի դոլար արտաքին պետական պարտքի մարման հարցը և առաջարկել համապատասխան լուծումներ՝ առաջիկա մի քանի օրերի ընթացքում դիրքորոշումները հստակեցնելու և ՀՀ կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության նիստում կողմնորոշվելու նպատակով:

Ն.Երիցյան - Մյուս կարևոր հարցերը, որոնց ես կուզեի անդրադառնալ, վերաբերում են պետական արժեթղթերի թողարկման և դրամավարկային քաղաքականության ու ներքին պարտքի կառավարման կարգավորմանը: Ես կարծում եմ, որ այս հարցերի քննարկումը պետք է կատարվի այլ ռեժիմով: Արժեթղթերի ցանկացած թողարկման վերաբերյալ նախարարության որոշումները պետք է կայացվեն բյուջետային և տնտեսական հանձնաժողովի նիստում, որտեղ կենտրոնական բանկի պաշտոնական ներկայացուցիչը իրավունք կունենա հայտնելու իր կարծիքը: Առաջացած պրոբլեմները կքննարկվեն նաև ՀՀ կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության հանձնաժողովի նիստում, և կարվեն համապատասխան դիտողություններ ու առաջարկություններ և, կարծում եմ, այս հարցում պասիվ դիրքորոշում չպետք է դրսևորել: ՀՀ կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության հանձնաժողովի նիստի արձանագրությունը լիովին հիմք կարող է հանդիսանալ այս ռեժիմով

աշխատելու համար: ՀՀ ԿԲ դրամավարկային քաղաքականության վարչությունում մշակվել է մի նյութ դրամավարկային քաղաքականության և ներքին պարտքի կոորդինացման վերաբերյալ, որին, լավ կլիներ, ծանոթանային նաև նախարարության ներկայացուցիչները: Սա, կարծում եմ, կլինի ավելի ճկուն ռեժիմ և միակ ճիշտ ուղին:

Այս մոտեցումներին հավանություն տվեցին նաև ՀՀ ֆինէկոնոմնախի ներկայացուցիչները և տեղեկացրին, որ նախարարությունում նույնպես պատրաստվում է մի փաստաթուղթ վերոհիշյալ հարցերի վերաբերյալ և կներկայացվի ՀՀ կենտրոնական բանկի համապատասխան հանձնաժողովի քննարկմանը:

5. Արձանագրել, որ պետական արժեթղթերի թողարկման և տեղաբաշխման հարցի հետ կապված բոլոր խնդիրներն անհրաժեշտ է դարձնել կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության և ֆինանսների ու էկոնոմիկայի նախարարության բյուջետային ու տնտեսական հարցերի հանձնաժողովների քննարկման լայն առարկա, որից հետո ընդունել համապատասխան որոշումներ:

6. Արձանագրել, որ երկուստեք պայմանավորվածություն ձեռք բերվեց մարտի 22-ին 1998թ. երկրորդ եռամսյակի դրամավարկային քաղաքականության ծրագրի համատեղ քննարկում կազմակերպելու վերաբերյալ:

7. Առաջարկել պրն Ա.Խուրշուդյանին

մինչև ս.թ. մարտի 21-ը ժամկետով պաշտոնապես արտահայտել ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության դիրքորոշումը արտաքին ակտիվների կառավարման խնդրի վերաբերյալ:

ՀՀ ԿԲ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄ Ն.ԵՐԻՑՅԱՆ